

ԳՐՕՃԱԿ

(ՊԱՏՄԻՑԺՈՎ Գ. ԼԵԹՈՐԻ)

Թարգ. հէորդ քահանայ Մկրտումիանց:

Բ.

ՄԵՐԵՐ

1541

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մոլոկս Վարդանեանի

1895

ԱՐԻԵՐ
1541.8
մայ.

2013

20 APR 2006

Թ թ օ զ ս կ

19 NOV 2010

(ՊԱՏՄԻԱԾՔ Գ. ԼԵՖՈՐԻ)

321

Ձարձ. Գէորգ քահանայ Մկրտումեանց:



Բ.

Թ ի ֆ լ ի ս
Տպարան Մովսէս Վարդանեանի
1895

02.05.2013

Дозв. Цензурою. 13 февраля 1895 г. г. Тифлисъ.



1541-2013
(4505) | 7.8. 1534
41



Կողմինան բանական դուռը, ցնցւեց. գոմի խոր-
քից նրա ականջին մի թոյլ հառաշանքի ձայն հասաւ:
— Երկի ինձ այնպէս թւաց:

Եւ խկապէս միայն լսում էր կովերի միա-
տեսակ չնշառութիւնը և նոցա շղթաների ախոռին
շփւելու ձայնը: Առանց շտապելու նա իջաւ մթնում
իրան ծահօթ աստիճաններով, մօտեցաւ հօր սիրած
կովին և դարձեալ՝ յանկարծ խեղտելով չնշառու-
թիւնը, լարեց լսողութիւնը: Սյս անգամ նրան
շթւաց, այլ պարզ լսեց հառաշանքի ձայնը, որ
գալիս էր դատարկ ախոռից, ուր խոտ էին հաւաքում:
Միրտ մաշող էր այդ հառաշանքը, որից և մի սար-
սուռ անցաւ կողմինայի մարմնով:

Նա ցած զնելով իր դոյլերը (ведро), վազեց
այն անկիւնը, ուր վառումէր լապտերը, առաւ այն
և դոդոջուն լուսով լուսաւորեց գոմը:

— Ո՞վ սուրբ Կոյս—բացականշեց նա:

Խոտի վրա՝ նրա առաջ ձեռքի վրա յենւած
պառկած էր մի զինոր, խոչոր աշքերը դէպի նա
յառած, որի մէջ արդէն մահ է տպաւորած:

Զինորը բոլորովին երիտասարդ էր, թոյլ,
առանց բեխերի. դա այն պատանիներիցն էր, որոնք
1870 թւին մի կողմն էին գցում Հոմերոսը և մըտ-
նում էին զինորների շարքը: Պատուած և կեղոստ
վերաբերուն հագին՝ նա մի ձեռքով ամուր բռնել էր

իր սէինը, իսկ միւս ձեռքը սեղմել էր արիւնլւայ կրծքին։ Կողինան մի հայեցքով նկատեց այդ բոլորը և ծունկ չոքելով, սկսաւ նայել նրա երեսին, որի վրայով հանդարտ գլորուումէին արցունքի կաթիւներ։ Զինւորն էլ իւր հայեցքը չէր հեռացնում Կողինայից և նրա շրթունքները լուռ շարժւումէին։ Կարծես ճգնում էին ձայն հանել։ Վերջապէս այդ շուռկից Կողինան ըմբռնեց, որ զինւորը խմել է ուզում։ Նա վեր թռաւ և շուտ վերադարձաւ ձեռքին մի դոյլ մինչև բերանը լիքը վրայուն կաթով։

— Ահա — ասաց նա։

Զգուշութեամբ Կողինան մօտեցրեց դոյլը զինւորի բերանին և նա ագահաբար վրայ ընկնելով, սկզբում սկսեց անընդհատ խմել և յետոյ՝ աւելի դանդաղ։ Երբեմն դէպի Կողինան բարձրացնելով իր դժգոյն դէմքը։ Ապա նորից կռացնելով նա զլուխը և ծանր շունչ քաշելով, խմումէր մեծ ումպերով, ինչպէս անասունները ջուր խմելիս։

Վերջապէս նա շունչը պահեց և արտասանեց։

— Ենորհակալ եմ։

Կողինան ցած դրեց դոյլը։

Զինւորը կարծելով, որ նա հեռանալ է ուզում, հազիւ լսելի շուռկով դարձաւ նրան։

— Ի սէր Աստուծոյ, մի թողնէր ինձ։

Սյդ խօսքերը ստիպեցին Կողինային յօնքերը կիտել։ Կարծես նա վիրաւորեց, ուստի համարեա սառը պատասխանեց։

— Տանը գերմանացիք կան.....

Սյդ խօսքերը սարսափեցրին զինւորին, նա մի թռոյցքով ոտքի կանգնեց և գունատ, անհանգիստ հայեցքով մըթմըթաց։

— Ո՞ւր վախչեմ... ես չեմ կարող նրանց անձնատուր լինել....

Նա մի շարժում արեց գէպ առաջ, բայց յանկարծ կանգ առնելով, օրօրւեց և լայն բանալով աչքերը, ընկաւ խոտի վրա անշարժ։ Իսկ շրթունքները, որոնց վրայով արիւն էր հօսում, ծամածուեցան։

— Մեռաւ, ի հարկէ մեռաւ նա։

Կողինան վախից պաշարւած, կռացրեց գլուխը դէպի նրա կուրծքը, աշխատելով վերաբկի վրայից լսել նրա սրտի բարախումը....

Վերջապէս նա լսեց սրտի բարախումը. բայց այնքան թոյլ էր զարկում, որ կարելի էր իւրաքանչիւր զարկը վերջինը համարել։

— Ի՞նչ անել — մտածումէր Կողինան։

Մի կողմից՝ բոլոր շրջակայքը բռնել էին գերմանացիները և նրան քաջ յայտնի էր, թէ ինչպէս վարւեցին նորա այն տեղական ընակիչների հետ, որոնք իրանց մօտ ապաստանել էին վիրաւորածներին ու փախստականներին։ Միւս կողմից՝ նա խոմ չէր կարող այդ դժբաղոտ զինւորին սպանել, քանի որ դուրս անել դրան իր պատահական թագստատեղից, նշանակումէր նրան սպանել, որովհետի եթէ նրան յաջողւէր աղատւել պահնորդների գնդակից, բաւական էր դրսի խոր ձիւնը և սառնամանիքը, որ միանգամայն նա կորչէր։

Ո՞չ Կլողինան չէ կարող այդպէս վարւել։ Նախ որ դա զինւոր է. երկրորդ՝ նոյն այս նշանազգեստը կրումնեն նրա եղբայրները, որոնք շատ կարելի է հէնց այս րոպէին, ինչպէս դա, օգնութիւն են խընդրում ուրիշից։

Կլողինայի վճիռը ընդունեցաւ—զինւորը կալւածքում պիտի մնար այնքան, մինչև ոյժերը թոյլ տային նրան փախուստ տալ և Կլողինան այդ վճիռը ոչոքի չպիտի ասի, մինչև անգամ իր հօրը։ Կլողինան իր վրայ առաւ պատասխանատութիւնը և միայնակ պէտքէ տանի բոլոր հետևանքները։ Նա արագութեամբ խոտից անկողին պատրաստեց վիրաւորածի համար և տապահակով (ուսուա) ծածկեց նրան։ Յետոյ լցրեց իր դոյլերը, դուրս եկաւ գոմից, ծածկելով դռները։

—Ի՞նչ ուշացար դու Կլողինա—ընդառաջեց նրան ծերունի հայրը։ Լուիզէն, երբ նա խոհանոց մտաւ—նոքա անհամբեր քեզ են սպասում։

Եւ նա գլխով արեց դահլիճի այն կողմը, որտեղից դժոխային ձայներ էին լսում։ Սրբածների երգերը միախառնում էին բաժակների շրխկոցի և խցանների տրաքոցի հետ։

—Դու չէ՞ր կարող նրանց ծառայել—պատասխանեց աղջիկը այլալած դէմքով։

—Դու գիտես, որ նոքա միայն քեզ են ցանկանում։

Նա թափահարեց ուսերը և խուլ ձայնով ասաց։
—Իսկ եթէ ես չեմ ցանկանում... իսկ եթէ

նոքա՝ անպիտանները այն աստիճան ինձ անախորժենն, որ ուզումիմ երեսներին թքել... եթէ....

Ծերունին ձեռները խաչել և աղերսական դէմքով նայումէր աղջկան։

—Լսիր, Կլողինա—հառաչումէր նա—չէ որ դու մեր կործանումը, մեր մահը չես կամենում, այնպէս չէ։ Չէ որ ինքդ տեսար, ինչպէս նոքա այստեղ ամեն բան ուզումէին աւերել, բայց երբ դու երկեցար նրանց.... նոքա իսկոյն մեղմացան.... Դէհ, գնա նրանց մօտ.....

Աղջիկը նրա վրայ մի անբաւական հայեացք գցեց։

—Ինձ թւումէ, թէկ դու հայրս ես, բայց եթէ նոքա ինձնից պահանջէին.... նա խօսքը կտրեց, որպէսզի ատելութեամբ աւելացնի—աղջկադ պակաս ես գնահատում, քան կալւածքըդդուն....

Եւ վերցնելով դոյլերը, նա խստիւ բացեց դահլիճի դուռը, ուր նրա յայտնելը ընդունեցաւ կատաղի ուրախութեամբ։

Իսկ Լուիզէն հոգսի տակ ընկած, նստեց աթոռի վրայ կրակի մօտ, որտեղից առանց նշմարւելու կարող էր հետևել Կլողինային։

Կանացի ընաւորութեամբ ինչի ասես չես պատահի. ինչեն որ գերմանացիքը, ուրիշի նման նոքա էլ մարդիկ են էլի, միայն նոցա նշանազգեստը այլ է։ Բայց դեռ այդ ոչինչ չէ ապացուցանում և այդպիսի մի կալածքի համար արժէր, որ Կլողինան իր ատելութիւնը խեղտէր....

Կալւածքում ամէն բան լուռ էր:

Գերմանացիները լաւ խմել ու թափւած՝ քնել
էին. ոմանք յատակի վրայ, ոմանք դոշակների վրայ
ցածլիկ դահլիճում, ոմանք առաջին յարկում, խակ
մէկը մինչև անգամ ծերունի Լուիզէի հետ միասին
մի անկողնում:

Իսկ Կլոդինան ոտարորիկ կանգնած դուրսը՝
սառը յատակի վրայ, ականջը դրանը մօտեցրած,
լսումէր քնածների միատեսակ չնշառութիւնը....:

Վերջապէս ահա նա դուրս եկաւ բագը: Փայտէ
տրեխները, որ հագել էր խոհանոցում, ձիւնի մէջ
ճոճուումէին: Գիշերւայ մթութեան մէջ այդ ձայնը
նրան սարսափելի թւաց: Կլոդինան մտնելով գոմը,
կանգնեց վախից զարհուրած. ի՞նչ կլինի, եթէ գին-
տրը մեռած լինի:

Նա աստիճանաբար մօտեցաւ զինւորին և ձեռ-
քը դրեց նրա կրծքին. սիրտը բարախումէր և կիսա-
բաց շրթունքները շարժուում էին, նոքա աղեկտուր
հառաշանք էին արձակում:

— Բաղտաւոր ես — ասաց Կլոդինան կիսաձայն —
այսպիսի ցրտում....:

Նա վերցրեց իր վրայի լայն վերմակը և երե-
խայի նման նրա մէջ փաթաթեց վիրաւորւածին.
յետոյ՝ զգուշութեամբ մի ձեռքը գցեց նրա մէջքից,
միւսը կոնատակից, ճիգ արեց նրան բարձրացնել:
Նա ծանր չէ. այս նա ծանր չէ այն ցորենի պար-
կերից, որ Կլոդինան դէս ու դէն է անում ամբարա-
նոցում: Նա ուրախութեամբ բարձրացրեց զինւորին,

սեղմեց կրծքին, որպէսդի պաշտպանի նրան քամուց
և համարեա վազէվագ անցաւ բագի տարածութիւնը:

Սյու այդ միքանի վարկենի տարածութիւնը
անցնելիս, Կլոդինայի սիրտը սաստիկ զարկումէլք
կրծքի տակ. բաւական էր մի շան հաջոց, որ արթ-
նացները գիշերապահներին և այնուհետև կորածէին
նա, վիրաւորւածը, հայրն ու կալւածքը: Գերմանա-
ցիները կատակ չեն սիրում:

Սյուպէս նա առանց արգելքի հասաւ - մինչեւ
խոհանոցի գուռը:

Նորից այնտեղ թողնելով իր փայտէ տրեխները,
ոտարորիկ սկսաւ բարձրանալ սանդուզտների վրայով
և այս անգամ աւելի դանդաղ, ծածկւած սառը քրտին-
քով: Նա դողումէր միայն այն մտքի առաջ, որ
կարողէ իր առաջը կտրել գարհուրելի գերմանացին
զինւորներից մէկը:

Երբ վերև բարձրացաւ, Կլոդինան հագիւ էր
շունչ քաշում, ձեռք ու ոտները թուլացել էին:
Բայց նա իրան սաստիկ բաղտաւոր էր զգում, որ
յաջողութեամբ հասաւ նպատակին և համարեա
յոգնածութիւն չէր զգում:

Ի՞նչ կլինի վերջը, յայտնի չէ. բայց առ այժմ
զինւորը աղատ է սառնամանիքից, գնդակներից։
Խոկ եթէ արդէն վիճակւածէ նրան վէրքերից մեռ-
նել, գոնէ քրիստոնէի նման կմեռնի — տաք անկող-
նում, հոգատար ընկերի շրջանում և ոչթէ շան նման
կսատակի գոմի մի անկիւնում կամ ճանապարհին
ինչպէս և շատերը:

Կլողինան բանալիով ներսից կողպեց դուռը և
ծածկելով պատուհանի փեղկերը, վառեց ճրագը:

Զինորի շրթունքները յանկարծ շարժւեցին և
Կլողինան ըմբռնեց դարձեալ, որ խմել է ուզում:

Նա տւեց ջրամանը. զինորը երկու ձեռով
վերցրեց ու ապահութեամբ սկսեց խմել:

Կլողինան արագ յետ արեց նրա վերարկւի
կոճակները ու ճիշ արձակելով, յետ դատկեց:

Կրծքի վրայ՝ այնտեղում, ուր զինորը ձեռքը
աեղմել էր, Կլողինան տեսաւ մի կեղտոտ չորի կտոր,
որի ինչ լինելը հասկացաւ նրա երեք գոյներից: Այդ
դրօշակ էր. աւելի ուղիղ՝ դրօշակի պատառ, որ
մնացել էր կատաղի ճակատամարտից:

Դոզգողալով, արտասւալից աչքերով նա խոնարհ-
եց և զերմեռանդութեամբ համբուրեց թանկագին
պատառը:

Այդ համբոյրը ստիպեց վիրաւորւածին բանալ
աչքերը և նա երկար շատ երկար նայումէր աղջկան:

— Դուք ազատած էք—ասաց Կլողինան:

Բաղտաւորութեան ճառագայթը լուսաւորեց
վիրաւորածի դէմքը և նա շշնջաց:

— Դրօշակն է ազատած.. չնորհակալ եմ դրա համար:
Եւ ընկաւ մէջքի վրայ:

Կլողինան շտապով տեղաւորեց նրան. բաց ա-
րեց շապիկը, որ վէրքը տեսնի: Զախ ուսի ուղղու-
թեամբ՝ քնքոյշ կաշւի վրայ, երեսումէր բռան մեծու-
թեամբ մի կարմիր բիծ, իսկ այդ բծի մէջտեղը
մնացած սպի, որը ծածկւածէր չորացած արիւնով

որը ցոյց էր տալիս գնդակի խրւած տեղը:
— Խեղճ երեխայ:

Առաւ տաք ջուր լուաց և փաթաթեց վէրքը
հէնց իր շապկից կտրած կոշտ քաթանով:

Կլողինան քաշեց բազկաթուր դէպի վիրաւոր-
ւածի մահճակալը. նա վճռել էր ամբողջ գիշեր
հսկել հիւանդի մահճակալի մօտ, բայց յօգնածու-
թիւնը յաղթեց և խոնարհեցնելով գլուխը բազկա-
թուրի մէջքին, նա քնեց....

Պատուհանի ճեղքերից արդէն թափանցումէին
արկի ճառագայթները, երբ Կլողինան բացեց աչքե-
րը. նորան մէկը կանչումէր:

Նա շփոթւած դարձաւ և հանդիպեց վիրաւոր-
ւածի հայեացքին, որը մի փոքր առաջ թեքելով
կռան վրայ, կիսով չափ պառկած էր մահճակալում:

— Կլողինան—ասաց զինորը քնքոյշ ձայնով,
որի մէջ գեռ ևս լւում էին մանկական հնչիւններ—
ձեզ կանչումեն:

Եւ իսկապէս սանդուղտներից ներքև լւեցաւ
կուիզէի խոռոշ ձայնը.— Կլողինա... Կլողինա—
կանչումէր կալածատէրը—վերջապէս՝ ցած կգաս
թէ ոչ... սպասիր դու անբան, էս բոպէիս ինքս եմ
գալիս ետևիցդ....

Նա արագ վեր թռաւ տեղից, վազեց դէպի
դուռը և մի քիչ բանալով, գոչեց:

— Ես այստեղ եմ, այստեղ. իսկոյն կգամ:
Նորից դուռը փակելով Կլողինան մօտեցաւ
մահճակալին:

Այժմ ինչպէս ես—հարցրեց նա անհանգիստ հետաքրքրութեամբ՝ նայելով հիւանդի դէմքին։

Պատասխանի տեղ առաւ նա կլողինայլը ձեռքը և մինչև վերջինս իրան հաշիւ կտար, համբուրեց։

—Դուք ինչպէս բարի էք—շնչաց նա։ Առանց ձեղ դրօշակը կընկնէր նրանց (գերմանացիների) ձեռքը։

Կլողինան հասկացաւ, որ խօսքը դրօշակի պատառի մասին էր, որի ծայրը երևումէր նրա բաց շապկի տակից, սեղմեց բռունցքները և մումուց։

—Մնալիսաններ։

Եւ մարած կրակը փայլեց զինւորի յստակ, մանկական աշքերում։

—Այն—կլողինայից յետոյ խուլ ձայնով կըրկնեց—անպիտաններ։ Երէկ տեսնէիք նրանց, երբ մեր զօրաբաժինը շրջապատեցին. ինչպէս կատաղած գայլեր ընկել էին մեղ վրայ.... Այն, այդ սարսափելի ճակատամարտ էր։ Սյդպիսին ես առաջին անգամն էի տեսնում.... Եւ այդ ինձ ոչ մի խղճահարութիւն չէր պատճառում, մինչև որ իմ սէինը մտաւ ինչոր մէկի կուրծքը և այդ տակն ու վրայ արեց սիրտս։ Խըններդ դատեցէք, չ՞ որ մի ամիս առաջ մի ճագար անդամ սպանել անկարող էի։

—Կլողինա... կլողինա... բզաւումէր Լուիզէն—խկոյն ինքս կրաքարանամ։

Կլողինան անհամբերութեամբ շարժեց ուսերը։ Իսկ հրտեղից է քեզ այդ դրօշակը—հարցրեց

Նա զինւորին։ Պատանու դէմքը խիստ արտայայտութիւն ստացաւ։

—Դրօշակը... ուղիղն ասած, չիմ յիշում ինչպէս սկսւեց. միայն յիշում եմ, որ մի զարհուրելի ճակատամարտից յետ՝ երբ մենք միքանի ընկերներ յետ նահանջելով, ապաստանւեցանք մի ամբարանոցում, ուր մերոնցից արդէն քան հոգի կային... կէս ժամի չափ ինչպէս և լինի, մենք դիմացանք, միմեանց ետեկից ընկնելով... Վերջապէս՝ մեր բոլոր ռազմամթերքը սպառւեց և միայն չորս հոգի էինք մնացել... որոշեցինք, սողոսկելով ազատւել, բայց սոյն բոպէին մի նոր պայթիւն ջարդեց ամբարանոցի բոլոր պատուհանները։ Ինձ այնպէս թւաց, որ ուսիս, կարծես, փայտով խփեցին և ես ընկայ։

—Խեղճ երեխայ—շնչաց կլողինան։

—Երբ ուշքի եկայ, արդէն մութն էր։ Ամեն ինչ լուռ էր և շուրջս միւսները անշարժ պառկած էին... Ես տանջուումէի... Սարսափելի էր այդ ինձ համար, բայց ես, որ ուսումնարանում ամենից քնքոյչն էի, չէի լալիս. ես ազատւելու հնար էի մտածում։ Ինչպէս լինի, ոտքի կանգնեցի և արդէն դռան մօտ էի, երբ ետեկցս մի թոյլ ձայն լսեցի, որը կանչումէր ինձ. «ընկեր»..... «ընկեր, ընկեր»—կրկնումէր ձայնը տակաւ առ տակաւ թուկանալով։ Ես յետ նայեցի... Ամբարանոցի պատին թեք ընկած՝ ինչոր մի ստեկ ձեռքով շարժումէր դէպի իմ կողմը։ Ես դիակների վրայից քայլելով, մօտեցայ ստերին. դա մեր ծերունի սերժանտ—մահօրն էր։ Այս ճակա-

տամարտում մենք երկուսս կողք կողքի կանգնած կրակում էինք մեր հրացանները և տեսայ թէ՝ ինչպէս նա զետին զլորւեց զլմին վէրք ստանալով։ Ես նրան մեռած էի հաշւում։ «Սիրելիս.—ասաց նա, մի ինչոր բան դէպ ինձ ձգելով, որի ինչ լինելը շիմացայ մթութեան պատճառաւ—ահա թէ ինչ մնաց իմ գօրախմբի դրօշակից։ Ես այդ պլոկեցի ձողից, որսլէսզի հեշտ լինի պաշտպանել, բայց իմ բանը վերջացել է. այդ 120-րդ գօրաբաժնի դրօշակնէ»։ ասաց և մահացած ընկաւ։ Սյնուհետեւ սկսեցի փախուստ տալ դէպի սահմանը, որ ասում են երկու լիօ է*). սակայն ճանապարհին մոլորւեցայ և ցրտից դողալով, չարչարւած հասայ այստեղ և ահա.....

Սյս երկար պատմութիւնը թուլացրեց պատանուն, նա զլուխը դրեց բարձի վրայ և շնչաց։
—Խմել եմ ուզում։

—Կլողինա՛— կատաղաբար գոռաց Լուիզէն— Կլողինա՛.... ցած արի՛ անբան. ահա ինքս եմ բարձրանում....

Վիրաւորածը վախեցած նայեց Կլողինային։

—Մի վախինար, հայրս պադագրա ունի, նա բարձր սանդուղտներից վախումէ, բայց և այնպէս ես ինքս էլ ցած կիշնեմ այս լուպէիս. նա ընդունակ է մինչև անգամ սրածայր զլսարկաւորներից մէկին (գերմանացի զինւոր) այստեղ ուղարկել։ Սյժմ քնեցէք. երբ կազատւեմ գործից, նորից կզամ....

Մի ժամից Կլողինան վերադարձաւ արագ ըն-

*Օանօթ. *) լիօն մօտ երեք վերստէ։

թանալուց շունչը արգելելով և ժպիտը երեսին՝ գոգնոցի տակից հանեց մի գաւաթ հում կաթւ։

—Ահա ինչով կարելի է կշտանալ և ծարաւը կոտրել։

Նա խմեց։ Ապա Կլողինան երէկւայ նման լաք նրա վէրքը։

—Քեզ այժմ արդէն հարկաւոր է քնել։

Զինւորի այտի վրայով մի արցունք զլորւեց։

—Դուք տանցւմէք։

—Սաստիկ— պատասխանեց նա, աշխատելով արտասուքը զսպել և հերոսական ժպտով աւելացրեց։

—Սյսր քեզ ասացի, որ ուսումնարանում քընքոյներից մէկն էի։

—Սյն ուսումնարանումն էր—աշխատելով կատակ անել—այժմ դուք արդէն ուսումնարանում չէք։

—Մի ամիս է միայն... Հայրս և մեծ եղբայրս մնացին Փարիզում՝ ազգային հեծելախմբում... Խոկ մայրս ինձ և քոյրերիս հետ զնաց Տուր.... Ես սովորում էի լսարանում, բայց Սեգանից վեց շաբաթ յետոյ ինսդրեցի մօրս, ինձ ևս թողնի պատերազմ գնալ. Սկզբում նա դիմադրում էր, լալիս էր, բայց յետոյ՝ զիջաւ և ես զնացի որպէս կամաւոր....

Կլողինան լսումէր այդ հասարակ պատմութիւնը, դժւարութեամբ խեղտելով արտասունքները։

Զինւորը կարմրելով ասաց.

—Դուք այնպէս բարի, այնպէս գեղեցիկ էք, ինչպէս բարի....

Կլողինան ոտքի կանգնեց և շփոթւած ասաց։

— Դուք այժմ թարմացաք, հարկաւոր է քնել —
Առաջադրութիւն չդարձնելով նրա աղերսալի հայեց-
քին, դուրս գնաց:

Զինւորը մնենակ մնալով, երկար նայեց դրանք,
ուր անյայտացաւ Կլողինան յետոյ՝ գլուխը բարձին
խոնարհեց. աշքերը փակւեցան և նա քնեց՝ երազում
արտասանելով — Կլողինա:

Սնցաւ ութն օր: Տանջանքի և յուղման ութն
օր: Նոքա երկուսնէլ դողում էին այն պատառի հա-
մար, որը ուխտել էին աղատել: Ամեն մի չնչին ձայն
ստիպումէր զինւորին ցնցւել և նա անհանգիստ սըր-
տով ամեն րոպէ յարձակմունքի էր սպասում, որով-
հետև վճռել էր կեանքի գնով պաշտպանել իր հա-
մար թանկ գրօշակը:


Կլողինան էլ իւր կողմիցն էր նոյնալէս շտապում
գործից շուտ վերադառնալ. նրան վրտովումէր մի
միտք, արդեօք չէ կատարել այն, ինչից նա վախում-
էր և որը օրէցօր նրան անխուսափելի էր երեսում:

Սնհաւատալի էր, որ վերջի վերջոյ հայրը ուշադ-
քութիւն չդարձնէր նրա անդադար վազվոցին
սանդուխտների վրայով: Նա շատ լաւ զիտէր հօր
վախկութիւնը և նրա անսահման սէրը դէպի իւր
կալւածքը և այդ բաւական էր համոզւելու, որ Լուի-
ֆին կմատնէր զինւորին, որի ներկայութիւնը կարող
էր իր կործանման պատճառ լինել:

Արդէն ութ օր էր, Կլողինան չէր պառկել: Նա
ամբողջ գիշերները առանց հանւելու, բազկաթոռի
վրայ անկողնի մօտ, ամեն րոպէ սթափւելով, ճրագի
ազօտ լուսով հսկումէր հիւանդին: Նա շատ անգամ
նկատում էր, որ հիւանդը միշտ մի տեսակ լարւած
հայեցը էր ձգում դէպի դուռը և ամեն մի չնչին
ձայնի ուշադիր ականջ էր գնում: Սյդպիսի պայ-
մանների մէջ՝ անկարելի էր կարծել, որ նա կառող-
ջանայ: Ուղիղէ, ոյժը մի քիչ եկաւ, բայց տենդը
չէր անցնում. իսկ գնդակը անտանելի ցաւ էր պատ-
ճառում: Այդ ցաւի ուշաթափութիւնից մի անգամ
հիւանդը սթափւելով, որի սաստկութիւնից բարձը
կրծումէր, որպէսզի իր հառաշանքները չլսւեն, ա-
սաց. — զիտէր, ինձ հարկաւոր է այստեղից հեռա-
նալ, ես սաստիկ տանջում եմ, իսկ իմ մի փաքրիկ
ձայնը կարողէ մատնել. այն ժամանակ ինչ կլինի
ձեր գրութիւնը: Այդ անսպիտանները խաթը չեն ա-
նի ձեզ... ես առանց այն էլ արդէն ի շարն եմ
գործ դնում ձեր անձնագոր հիւրասիրութիւնը,
հոգատարութիւնը և հսկողութիւնը.... հարկաւոր է
հեռանալ:

Մի քանի վարկեան Կլողինան նայեց նրան.
կարծես իրան զգում էր կանգնած մի խելազարի
առաջ, ուստի ասաց:

— Հեռանալ... հեռանալ.... մւր. ձորում ցըր-
տից մեռնելու և առաջին պատահող զերմանացի
թափառաշրջկին յանձնելու այն գրօշակը, որը ազ-
տելու խոստումն էր արել....



— Գուք ինձ ասացիք, այստեղից մինչև սահ
ման մի լիօիցն էլ պտկասէ, միայն ճանապարհը ցայց
տւէք ինձ... և գուցէ միայն անյաջողութիւնը...

— Բայց չէ որ դուք ոյժ չունէք:

Նա շարժեց գլուխը և կուրծքը սեղմելով, ասաց:

— Որպէսզի գրօշակը ազատած լինեմ, ես կր-
գտնեմ իմ մէջ ոյժ, այն էլ մի լիօ — այդ հեռու չէ:

Կլողինան լուռ էր. բայց երբ նա գուրս եկաւ
սենեակից, եթէ վերաւորւածը նայէր նրան, կարսդ
էր նկատել, որ կլողինան մի որոշումն է անում...

Եւ ահա զինւորը նստած է բազկաթոռի վրայ,
հագել է իր վերարկուն, որը կոճկել է գրօշակի վրայով
և սպասում է կլողինայի վերապարձին, որ գուրս
էր եկել հաւաստիանալու թէ՛ հնար կայ անարգել
փախչելու, թէ՞ ոչ:

— Ի՞նչ եղաւ — հոգսի տակ հարցրեց զին-
ւորը, երբ կլողինան մտաւ:

— Բոլորը քնած են: Եւ վերջապէս նորա ինձ
չեն անհանգստացնում, նրանց առատօրէն հիւրա-
սիրել եմ զինով. այլ վատն այն է, որ ձիւն է զալիս:

— Այդ լաւ է, մեր քայլեղի ձայնը չեն լի —
պատասխանեց նա — բայց դուք ի՞նչ էք անում:

Կլողինան վերարկուն էր հագնում:

— Տեսնումէք, վերարկուս եմ հագնում. այժմ
գնանք,

— Մենք մեր ենք գնում:

— Տէ՛ր Աստանած, ողեկցումեմ ձեղ. դուք կար
ծումէք, որ ձեղ մենակ, այսպէս հիւմնդ բաց կրթող-

նեմ, այն էլ զիշերը, սառնամանկրին. ոչ — և յան-
դիմանանքի ձեռվ աւելացրեց. — Այդ լաւ չէ. բայց
ասինք, իրաւունք էլ ունիք, որովհետև ինձ չէք
ճանաչում:

Զինւորը առաւ կլողինայի թեր և զերմօրէն
ասաց:

— Թէկ ձեղ չեմ ճանաչում, բայց գիտեմ, որ
դուք բարի, արժանաւոր աղջիկ էք. գիտեմ, որ դուք
իսկական ֆրանսուհի էք: Ես զգումնի, կլողինա,
որ սիրում եմ ձեղ....

Վառ կարմրատակեց աղջկայ դէմքը:

— Ֆամանակն է — յանկարծ հակիրճ կերպով
ասաց կլողինան:

Նա անցաւ առաջ, նրան հետեւց զինւորը մի
ձեռքով բռնելով վանդակները, միաը կոթնելով
կլողինայի ուսին:

Իջնելը շատ դժւար էր. բայց նորա յաջողու-
թեամբ իջան մինչեւ դուռը: Անցնելիս կլողինան
ձեռաց պատից վերցրեց Լուկպէի վերարկուն և ձգեց
զինւորի ուսերին:

— Բագում չները անցուդարձ են անում:

Դրան բացւածքից յարձակւեց նրանց վրայ
ձիւնախառն կատաղի մրրիկը:

— Որպէօք վաղւան շյետաձգենք — առաջարկեց
կլողինան:

— Գնանք — եղաւ զինւորի պատասխանը:

Զիւնը երկու օր անընդհատ թափւումէր միծ
միծ քուշաներով և ծածկել էր երկիրը հաստ

կեղևով, այնպէս որ մինչև ծնկները նոքա թաղւում էին:

Կլողինան թևանցուկ առնելով զինուրին, զգաց, որ նրա ձեռքը դրդումէ:

Բայց նա գնումէր աշխուժով: Սնցնելով դարբասը, նոքա ճանապարհը կտրեցին, մտան անտառ, որ ծածկումէր նրանց՝ բոլոր շրջակայքում դրւած գիշերապահներից: Անսովոր լինելով զիւղական անյարմար կօշիկներին, վիրաւորածը սայթաքեց և այդ շարժումից այնպիսի ցաւ զգաց ուսագլխում, որ ձայն արձակեց:

— Ո՞հ Ս. ստած՝ հառաչեց նա:

Անզօրութիւնից ստիպած՝ նա կանգ առաւ և ամբողջ ծանրութեամբ ընկաւ կլողինայի վրայ: Այն ժամանակ կլողինան, անսպասելի կերպով, վեր քաշեց զինուրին ձեռքերի վրայ և սկսաւ տանել նրան, ինչպէս գոմից տուն էր բերել:

Կլողինան զինուրի կողմից տրտունջ էր սպասում, բայց նա լուռ էր, ամաշումէր իր թուլութիւնից. միայն արտասուրի երկու կաթիլներ զլորւեցան նրա աշերից և սառեցին այտերի վրայ:

Իսկ անգնահատելի աղջիկը ձիւնում թաղւելով, ամեն քայլափոխում սայթաքելով, շունչը արգելւելով իր բեռի ծանրութեան տակ, առաջ էր զնում:

Սնցնելով հարիւր մետր*), աւելի խորասուզ-

Թանօթ. *). Մի մետրը հաւասար է 1,406 ուսական արշինին:

ւեց անտառի մէջ, ուր մի լերկ բնին կապածէր մի ձի սայլակում լծած:

— Վերջապէս այժմ աղատած ենք:

Եւ այդ համոզումը կլողինային աւելի ոյժ տւեց: Նա հիւանդին դրեց սայլակի մէջ, ինքն էլ նստաւ մօտը, առաւ երասանները ձեռքը և խփեց ձիուն:

— Դէ՞հ մոխրագնյն, առաջ գնա:

Զին քաջակերութեան կարիք չզգալով, մեծ մեծ քայլերով սկսաւ վագել խորդ ու բորդ ճանապարհով:

— Օ՞հ — ուրախագին սասաց կլողինան իւր ուղեկցին — այժմ հայրս իմանար, ուր է նրա ձին:

Զինուրը վեր բարձրացաւ խոտի վրայ և գլուխը դնելով կլողինայի ծնկների վրայ, քնքշաքար սասաց:

— Ի չնորհս ձեր՝ այդ անիծածները չեն խի դրօշակս և ես էլ շուտով կարժանանամ մօրս տեսութեամնը:

Կլողինան ոչինչ չսկատասխանեց. կրկին խփեց ձիուն և բլաւեց:

— Դէ՞հ մոխրագնյն, աշխոյժ կաց, մի քնիր:

Եւ հորիզոնի վրայ սեին տւող տարածութիւնը ցոյց տալով, սասաց.

— Միայն հարկաւոր է այն անտառին հասնել, այն ժամանակ սրածայր կասկաներին կարողենք երկար քիթ ցոյց տալ... Տաս րոպէ ևս և մենք բել գիայումն ենք:

Յանկարծ նրա յոնքերը կիտւեցան, իսկ գէմը վրդովմունք էր ալտայայտում:

— Այս ի՞նչ է. կամ զուցէ աշքիս է երկում. նորա ի՞նչ են անելու անտառում:

Նա նորից զարկեց ձիուն:

Յանկարծ աջ ու ձախ կողմից մարդիկ յայտնեցան ու նոցա ճանապարհը կտրեցին:

— Wer ձա! Ո՞վ է դա, ձայն լուեց:

—Պառկէք—ասաց Կլոդինան, հրելով դինորին ու նորից զարկեց ձիուն, որը կատաղի արշաւում էր:

Հաւեցան հրացանի ձայներ և գնդակները շաշում էին սայլակի շուրջը. դոցանից մէկը մինչև անդամ փշրեց սայլակի տախտակը ուղիղ այն ուղղութեամբ, ուր դինորի գլուխն էր հանգստանում:

Կլոդինան բաց թողեց երասանները և վախեցած ձին սկսեց փախցնել:

Հրացանների նոր որսուր խանգարեց զիշերւայ լուռթիւնը: Զին հառաչեց, օրօրւեց և վայր ընկաւ կողը վրայ. սայլակն էլ գլորւեց ու դինորին և Կլոդինային ձիւնի մէջ նետեց:

Երկու հարիւր մետրի վրայ ուրախ աղաղակ լըսեց: Վեր ցատկելով տեղից, Կլոդինան հեռւսւմ երկու շարժող կէտեր տեսաւ:

Շուտ արէք, շուտ—ասաց նա, բռնելով իր ուղեկցի ձեռքը—անվեհեր եղէք, անա սահմանը, այնտեղէ և մեր փրկութիւնը:

Սյապէս նորա մի փոքր ժամանակ առաջ էին վագում այն ուղիով, որը ոլորւումէր բարձրակատար սօսիների միջով:

Բայց վիրաւորւածը յանկարծ կանգ առաւ և թոյլ ձայնով ասաց:

—Ո՞չ, ո՞չ, այլս անկարողեմ... վախէք առանց ինձ:

Կլոդինան ուզեց նրան բարձրացնել բազուկների վրայ ինչպէս և առաջ, բայց նա յուսաբեկ նստաւ գետնի վրայ:

—Ո՞չ, ամեն բան վերջացածէ... Ոզչ մէկ է, ես մինչև տեղ հասնելը կմեռնեմ. անա ձեզ.... և նա ձգեց Կլոդինային եռագոյն պատառը:

—Զեղ թողնել—գոչեց գառնապէս Կլոդինան—Ո՞չ երբէք:

Զինուրների աղաղակը արդէն պարզ լսումէր:

—Փախէք... վախէք... աղաղումէր վիրաւորւածը—աղատէք դրօշակը:

Մի վարկեան տարուբերելուց յետ՝ Կլոդինան առաւ դրօշակի արիւնաների պատառը և հեծկլտալով, առաջ արշաւեց:

Երկու հետքից խարսած չների նման՝ զերմանացիները անցան այն թփի մօտով, որի ետև արիւնքամ ընկած էր դինորը և շտապեցին Կլոդինայի ետևից:

Բայց մանկութիւնից դաշտերում վաղվել սովորած վինելով, նա իրան հետևողներին վերազանցեց վագելու մէջ: Իր ետև թողնելով անտառը, նրան քսան միտր էր մնում սահմանի սիւներին հասնելու. բայց յանկարծ հրացանների նոր որոտում լուեց:

— Աստւած իմ — շնչաց նա, կանդ առաւ, սեղմեց իրան հաւատացած դրօշակը:

— Աւազակներ:

Նորա ոտները դողացին և աչքերը մութը պատեց:

— Սյստեղ մեռնել. իսկ դրօշակը:

Ո՞չ այդ անկարելի է: Եւ իր հայրենասիրական զգացմոնքից ովտ առնելով, նա առաջ դնաց մի ձեռքին դրօշակը, իսկ միւսով վերքից ծորող արիւնը պահելով:

Լուեցաւ գարձեալ երկու պայթիւն՝ Կողինան կրկին մի քանի քայլ արեց և արիւնաթաթախ ընկաւ, սահմանից հինգ մետր անգամ անցնելով:

— Ազատւածէ — շնչաց Կողինան ու լոեց, դէմքը դէպի երկինք գարձրած...

Գերմանացի գիշերապահները սահմանին հասնելով, մի շրջան արեցին ու իրանց անյաշողութիւնից կատաղած՝ վերադարձան:

Քառորդ ժամ անցած՝ եթէ գոցանից մէկը յետ նայէր, կնշմարէր ձիւնի վրայ մի կէտ, որը գանգաղ առաջ էր շարժւում, մերթ կանդ էր առնում և մերթ նորից առաջ շարժւում: Սյու կէտը ընթանում էր դէպի սահման: Դա վիրաւորւած զինուրն էր, որը այդ ուղղութիւնում լած վինելով հրացանաձութիւնները, ժողովեց իր վերջին ոյժերը, որպէս զի կարողանայ գտնել իր ուղեկցուհուն:

~~~~~  
Բելգիական կարաբինարները, որոնք նշանակած էին սահմանում Բելգիայի չէպոքութիւնը պահ-

պանելու, երբ առաւօտեան անցնումէին այնտեղով, տեսան ձիւնի մէջ կիսով թաղւած ֆրանսիական զինուրին, որի զլուխը հանգստանում էր մի աղջկայ կրծքին. Նորա մատները սեղմել էին եռագոյն դրօշակը, իսկ շրթունքները հպւել էին մատաղ աղջկայ ձեռքին:

Պ Ե Ր Տ :



ՀՀ Ազգային գրադարան



NL0303135

- |    |                   |   |   |   |   |      |      |
|----|-------------------|---|---|---|---|------|------|
| 1. | Պայթմաղանց Միքելը | • | • | • | • | 8 կ. |      |
| 2. | Գրօշակ            | • | • | • | • | •    | 8 կ. |

Շուտով տպագրութեան կ'յանձնէի

Յուրըի փաշա—Կարավելսիլի: